տանցւոց՝ բազմիցս կողոպտեն զուղևորս, մերթ և սպանանեն. զիտեմ զի ծոյլ է ձիդ, մի խնայիցես ի խարազանն։ Եւ ետ ցիս՝ զոր ինքն ունէր։ Գընայինք արդեօք՝ այլ իբր արշաւմամբ՝ վասն տարամերժելոյ աւուրն. զի գոնէ նախ քան զմուտ արեւոյն՝ յանտառէն արտելանիցէաք։ Լուր աստ զկատարած կրիցս. զի դեռ կերեալ էի, և ստամոքսն ի բնէ յամրամարս, տակաւին չէր ծախեալ զկերակուրն. և ի ցնցմանէ ձիաւորութեանն, (զի ձին էր վատաքայլ և ոստոստամբ ընկայր), չփոթեցան ի նմա կերեալքն, և տողկայի. բազուկքս լքան ի հարկանելոյ զձին պղերգ. ի կարծրութենէ համատին լերկացան մորթք.. յենուլ ոտիւք յ՚առ ներքանն՝ ի վերաբառնալ զծանրութիւն մարմնոյ՝ զօրէի ոչ. ի թուլութենէ ծնկացս օդից (յօդից), բնաւք մարմնոյս օդուածք՝ թուէր թէ իցէին լուծեցեալք. և ի խելապատմանէ գլխոյս պատճառաւ հարհրման՝ մինաշաղէին լուսարանքս. թանձրամ, տաժանմամբ մեծաւ հասինք ի դղեակն Սթառօչէլի, ի մտանել արեւուն։ Եւ ահա չուրջ եղեն արք և կանայք՝ ի տեղեկանալ զանցիցն Լէօպօլսոյ. որոց նշմարեցի ձեռամբ հարցանել ցոպասաւորն. չունելով զուժ խօսելոյ։ Վասն վարձու՝ զոչինչ կամէր առնուլ այրն բարի, ասելով, թէ վասն Աստուծոյ արարեալ իցէր. և հազիւ ստիպեցեալ՝ էառ զեօթն զլօթիս, և մի զլօթի եառ վասն ցքոյն խոստացելոյ, զի գնիցէր։

Ապա խոտորեցաք ի տուն ուրումն կարուակի՝ Փաւլօ կոչեցելոյ, գոլով տարաժամ որոնել զիջեւան պատկանաւոր. յոր՝ ի մտանելն՝ իսկոյն զժահահոտութիւն կաշեաց և այլոց փնդութեանց զգացեալ, ստամոքսն որ արդ վերդովեցեալն էր ի յարաշարժութենէ ցնցմանց և տողտկացեալ, փսխել սկսաւ զոր ունէր յինքեան. և յայնմանէ եւս առաւել նուաղեցեալ՝ անկայ ի տախտակին որ առ յորմն՝ իբր զկիսամեռ, և համարէին ամենեքեան թէ մեռանի արդ արդ։ Յետ սակաւու միոյ ուշաբերեալ՝ ասացի պատրաստել զմահիճ, համարելով թէ ի տան իմում իցէի. և եդին զծեղս ի վերայ տախտակին և զայլս առ ինարս, և ընկողմանեցին ի նմա, ծածկելով վերարկուաւս և եթ. և տանտիկինն կարեկից լեալ՝ մատոյց զջերմ գարէջուր կոգեաւ, զոր արբի. և իբր թմբրեցեալ՝ ննջեցի։ Սակաւ ինչ նիրհեալ՝ զարթեայ. և ոչ զիտէի զ՚ուր գոլս. զի և ոչ զճրագ թողեալ էին ի վառ. գննէի զմահիճս, և ահա ծեղք. հիանայի ընդ իս ինքեան, թէ որպիսի իցէր այն դիպուած. լուայ զի խորդայր ոք մերձ, և զարմացայ, ասելով ընդ միտս. Ոչ ոք երբէք ննջէր առ իս ի սենեկի. և այս ո՞վ իցէ արդեօք։ Մինչ յայսոսիկ վարանէի, սկսաւ աղմկիլ ստամոքսն, և արտաձգեաց զոր ունէր յինքեան. ուստի թալկացեալ անկայ. և գկնի փոքու միոյ ուշաբերեալ՝ ծանեայ զտեղին. կոչէի զփոքրաւորս, և ոչ զգայր. զի չունէի զուժ հզօրապէս ձայնելոյ. և ահա լուծումն.. ստիպէր, և ոչ կարէի գտանել զդուռն տանն, մինչեւ հազիւ զնընմամբ ձեռաց ընդ որմունս՝ արտելի. և դարձեալ ի ներքս՝ այսր և անդր տատանմամբ դիպեցայ տեղւոյս, և ննջեցի մինչեւ ցլոյս։

12. (Սեպ.) Յուրբաթոջ առաւօտուն զգացի դոյն ինչ յիս զօրութիւն և զա-